

ՀՏԴ 378.147

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

DOI 10.54151/27382559-2021.2b-218

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ Մանուկյան Ն. Հ.

2020 թվականի մարտի 16-ից, համավարակով պայմանավորված, Հայաստանի բոլոր կրթական հաստատությունները անցան դասընթացների կազմակերպման հեռավար ձևաչափին: Չնայած այն փաստին, որ հեռավար կրթությունը՝ որպես կրթության ձև, սկսել է զարգանալ դեռ 90-ականներից, մեր հանրապետության կրթական համակարգը կանգնեց բազմաթիվ թե՛ տեխնիկական խնդիրների և թե՛ դասավանդման մեթոդների ընտրության առջև: Հողվածում փորձ է արվում ներկայացնել հեռավար կրթության ընդհանուր պատկերը, խնդիրներն ու անելիքները համավարակի պայմաններում:

Բանալի բառեր. հեռավար ուսուցում, կրթական տեխնոլոգիաներ, վիրտուալ հեռավար միջավայր, կրթական էկոհամակարգեր:

Նախաբան: Դեռևս 2000-ականներից զարգացած երկրներում կառավարության մակարդակով իրականացվում են հեռավար ուսուցման ազգային ծրագրեր: Եվրոպական միությունը 2000-2010թթ. ընդունված Լիսաբոնյան ռազմավարությունում (Lisbon Agenda) հեռավար ուսուցումը ճանաչում է որպես գիտելիքահենք և մրցունակ տնտեսության կառուցման և ողջ կյանքի ուսուցման ստեղծման գործիք: Մինչ համաճարակը հեռավար ուսուցման ազգային ծրագրերը մշակվել են ավելի քան 40 երկրներում՝ ներառյալ զարգացող երկրները: Ավանդական կրթական համակարգերի համեմատ՝ հեռավար կրթության առանձնահատկություններից է կրթական հնարավորությունների մեծ բազմազանությունը, որը ներառում է տարատեսակ կրթական հեռավար հարթակներ, տարբեր համալսարանների առցանց դասընթացներ, հեռախոսային հավելվածներ, խաղեր և այլն: Ուսուցման հիբրիդային ձևը ենթադրում է ավանդական կրթության ձևաչափի համալրումը հեռավար կրթական տեխնոլոգիաներով, որը արդյունքում վերածվում է

բազմաչափ ուսումնական տարածքի և բացառիկ հնարավորություններ է ընձեռում անձնական և կոլեկտիվ կրթության համար: Պավել Լուկշան դեռ 2018 թվականի գեկույցում ասում է, որ 15-20 տարի հետո հեռավար կրթությունը, հզորացված առցանց միջավայր մուտք գործող սարքերով և վիրտուալ իրականության լուծումներով, կարող է դառնալ գլոբալ մասշտաբով ուսուցման գերիշխող ձևը: Այդ ժամանակ կրթական հաստատությունները կբացահայտեն, որ ոչ թե նրանք են օգտագործում առցանց կրթությունը իրենց առաջխաղացման համար, այլ առցանց կրթությունն է օգտագործում իրենց՝ որպես իր աշխատանքի կազմակերպման ձևերից մեկը [2]:

Հետազոտությունները վկայում են, որ համաճարակի ընթացքում հաստատությունները, որոնք ունեն տեղակայված վիրտուալ ուսուցման միջավայրեր և հարթակներ, ավելի արագ կազմակերպեցին ընդհատված ուսումնական գործընթացի անցումը հեռավարին: Հեռավար ուսուցումը թույլ է տալիս դիպլոմ ստանալ բարձրակարգ բուհերում՝ չլքելով հիմնական բնակության վայրը, և, որ ամենակարևորն է, հեռավար կրթությունը հնարավորություն է տալիս հաշմանդամ և սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ ունեցող անձանց ստանալ բարձրագույն կրթություն, ինչը բոլոր զարգացած երկրների սոցիալական քաղաքականության գերակա ուղղություններից է [1]:

ՀՀ կրթական համակարգը ևս հետ չի մնացել հեռավար կրթության զարգացման գործընթացից, սակայն մինչ համաճարակը այն կրել է հատվածավորված և ոչ համակարգված բնույթ և հիմնականում ֆինանսավորվել է միջազգային ծրագրերից և գրանտներից: ՀՀ կառավարությունը 2010 թվականին հաստատել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հեռավար ձևով ուսուցման կարգ»-ը, որի հիման վրա՝ նաև հեռավար ուսուցման կազմակերպման մեթոդական ուղեցույցը, որը պարունակում է բուհերում հեռավար կրթության կազմակերպման համընդհանուր դրույթներ [6]: Այս փաստաթղթում ամրագրված հեռավար կրթության կազմակերպման ընդհանուր սահմանումները հանգեցրին մի շարք խնդիրների, որոնք առաջանում էին արդեն իսկ առցանց կրթական ծրագրերի կազմակերպման ընթացքում [5]: ՀՀ բուհական համակարգի մի շարք համալսարաններ 2010թ. ի վեր, հիմնականում միջազգային գրանտների շնորհիվ, ստեղծել են վիրտուալ կրթական միջավայրեր կամ հեռավար հարթակներ, կազմակերպել դասախոսական և ադմինիստրատիվ անձնակազմի վերապատրաստումներ, սակայն փորձը ցույց տվեց, որ

Ֆինանսավորման ավարտից հետո հեռավար դասընթացների շարունակական զարգացումներ գործնականում տեղի չունեցան: Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակում կարելի է գտնել 2015-2020թթ. ընթացքում տպագրված ընդամենը յոթ ձեռնարկ և մեթոդական ուղեցույց՝ նվիրված բուհերում առցանց ուսուցման կազմակերպմանը և ղեկավարմանը [7]: COVID-19 համաճարակը ընդամիջոց փոխեց ավանդական կրթության կազմակերպման ձևը ինչպես աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Պարզ դարձավ, որ Հայաստանում հեռավար կրթության կազմակերպման համար առաջարկվող լուծումները տեղային են և մի շարք օբյեկտիվ պատճառներով հասանելի չեն բոլորին: Չնայած պետական և համայնքային ջանքերին՝ ՏՀՏ ենթակառուցվածքների և սարքավորումների բացակայությունը խանգարեց ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի ուսանողներին մասնակցելու առցանց դասընթացներին: Համակարգիչների և ինտերնետի սահմանափակ հասանելիությունը խոչընդոտ եղավ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներում: Այս համաճարակը, իր ողջ բացասական հետևանքներով հանդերձ, կարծես դարձավ հեռավար ուսուցման լայնածավալ փորձարկումը Հայաստանում: Հայաստանի ազգային կրթական և գիտական ցանցի ASNET-AM կողմից 2020 թվականի մայիսին իրականացված հարցումների համաձայն՝ բուհերը ուսումնական գործընթացի անընդհատությունն ապահովելու նպատակով հիմնականում օգտագործում են Moodle հարթակը դասապրոցեսը կազմակերպելու համար և Big Blue Button, Google Meet, Zoom, Microsoft Team, Jitsi ծրագրային հավելվածները՝ դասախոսությունները առցանց վարելու համար: Շատ դեպքերում տեխնիկական ռեսուրսների բացակայության պատճառով ոչ բոլոր կրթական հաստատությունները ունեն վիրտուալ ուսուցման միջավայր [9]: Այն բուհերը, որտեղ արդեն իսկ կար այդ միջավայրը, կարողացան շատ արագ կազմակերպել համաճարակի պատճառով ընդհատված ուսումնական գործընթացը: Այնուամենայնիվ տեխնիկական հզորությունները և ենթակառուցվածքները չեն ներում միաժամանակ շատ թվով ուսանողների հետ առցանց լսարաններ կազմակերպելը: Համաձայն UNDP գնահատման՝ Հայաստանում համաճարակի պատճառով փակված կրթական հաստատությունները բացասական տնտեսական ազդեցություն թողեցին հատկապես մարզերում և գյուղական համայնքներում [10]: Անցումը ինտերակտիվ ուսուցման նոր

մեթոդներին կրթական համակարգի համար ևս մի մարտահրավեր է: Ուսումնասիրությունները վկայում են, որ բուհերը հիմնականում կազմում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի անհրաժեշտ կոմպլեքսներ ունենալու վերապատրաստման ծրագրերը՝ հիմնվելով սեփական պատկերացումների վրա և հաճախ հաշվի չեն առնում դասավանդողների կարիքների գնահատումը: Արդյունքում դասախոսներին սովորեցնում են այն, ինչ կարող են, այլ ոչ թե այն, ինչ անհրաժեշտ է: Եվ նույնիսկ այն դեպքերում, երբ վերապատրաստման դասընթացները տալիս են իսկապես բարձրորակ գիտելիքներ, դասավանդողը միշտ չէ, որ կարող է փոխանցել ստացված հմտությունները առցանց լսարանին [4]: Թվային դարաշրջանում արագ մուտքը դեպի ցանկացած տեղեկատվական ռեսուրս, մեծածավալ տվյալների մշակումը, արհեստական բանականությունը, ամպային տեխնոլոգիաները և իրերի ինտերնետը մեծ առավելություններ են բացում նաև կրթության առջև, սակայն ուսուցումը ենթադրում է ոչ միայն տեղեկատվության և գիտելիքի փոխանցում, այլև մանկավարժական տեխնոլոգիաների փոխանցում՝ հիմնված ինչպես մասնագիտական ուսուցման, այնպես էլ անհատի ընդհանուր զարգացման մեթոդների վրա: Վերջինս շատ կարևոր է ոչ միայն անհատի զարգացման վաղ փուլերում, այլև բուհում՝ բարձրագույն կրթություն ստանալիս, երբ ձևավորվում է անձի աշխարհայացքը և արժեհամակարգը [1]: Լսարանային անմիջական շփման բացակայությունը բացասական ազդեցություն է թողնում կրթության որակի վրա: Covid-19-ի առաջին ալիքից հետո ուսանողության շրջանում մեր կողմից կատարված ֆոկուս-խմբային հարցումներից պարզ դարձավ, որ հեռավար ուսուցման դեպքում դասերի ընթացքին հետևելը բարդ է, և դասընթացները դառնում են ոչ հետաքրքիր, իսկ արդյունավետությունն ավելի ցածր է: Առցանց տարբերակով բարդ է ներգրավվել ուսումնական պրոցեսի մեջ, և տրված մեթոդները մասամբ են բավարարում ուսանողներին: Նաև ակնհայտ է դառնում, որ հեռավար ուսուցման պարագայում դժվար է փոխանցել մանկավարժական տեխնոլոգիաները և զարգացնել փափուկ հմտությունները, օր.՝ շփվելու, կարեկցելու և հաղորդակցման հմտությունները, անկանխատեսելի իրավիճակներում վարվելակերպը, շարժունակության բարձրացումը և այլն: Ռուս ոսուցիչներ Լեոնիդ Կացվան և Նիկոլայ Տոպոլևը (2020) հեռավար կրթությունը նմանեցնում են ֆիզիկական ադիաբատ պրոցեսին, որի ընթացքում համակարգի

կողմից ջերմություն չի կլանվում կամ անջատվում, այսինքն՝ գործընթացը ընթանում է առանց շրջակա միջավայրի հետ ջերմափոխանակության: Հեռավար կրթության հարթակներում ինչ-որ բան շարժվում է, բայց բացակայում է ջերմության փոխանցումը մի մարդուց մյուսը, կորչում է փոխօգնության և փոխգործակցության հնարավորությունը [8]: Հիմնականում այս խնդիրների առկայությունը պայմանավորված է հեռավար ուսուցման ձևաչափով դասապրոցեսը կազմակերպելու դասախոսի փորձի պակասից: Այսօր այն ուսուցիչը, որը չի կարողանում կիրառել հեռավար կրթական տեխնոլոգիաները և չի կարողանում ստեղծել հաղորդակցվելու վիրտուալ տարածք, կորցնում է իր մրցակցային առավելությունները մասնագիտական ոլորտում և հաճախ հետաքրքիր չէ ուսանողներին [3]: Հեռավար ուսուցման գործընթացում մանկավարժական տեխնոլոգիաներից կարևորագույնը դասավանդողի արհեստավարժությունն է: Հեռավար կրթության արդյունավետության ապահովման գրավականներից է նաև դասախոսի անմիջական մասնակցությունը ուսումնական գործընթացին և ուսումնական գործընթացի անընդհատ մշտադիտարկումը և վերլուծությունը: Առցանց դասընթացների յուրացման գործում ուսանողների կրթական գործունեության և վարքագծի վերլուծությունները կրթական վերջնարդյունքների բարելավման գործիքներից մեկն են:

Եզրահանգում: Ելնելով նոր իրողություններից՝ բարձրագույն կրթության հետագա զարգացման հեռանկարները ենթադրում են կրթական ծրագրերի, չափանիշների արդիականացում, հիբրիդային և առցանց ուսուցման ձևաչափերի միասնական մոտեցումների մշակում, համալսարաններում ճգնաժամի և փոփոխությունների կառավարման մշակույթի ձևավորում, ինչպես նաև կրթական տեխնոլոգիաների արդիականացում:

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ ДИСТАНЦИОННОГО ОБРАЗОВАНИЯ

Манукян Н. А.

С 16 марта 2020 года все учебные заведения Армении из-за пандемии перешли на организацию дистанционного обучения. Несмотря на то что дистанционное образование как одна из форм обучения начало развиваться в 90-х, образовательные учреждения нашей республики столкнулись со множеством проблем, как технических, так и с выбором

методик обучения. В статье предпринята попытка представить общую картину дистанционного образования, проблемы и решения в условиях пандемии.

Ключевые слова: дистанционное обучение, образовательные технологии, виртуальная образовательная среда, образовательные экосистемы.

CHALLENGES OF DISTANCE LEARNING TODAY

Manukyan N. H.

From March 16, 2020, all the educational institutions in Armenia, as conditioned with the epidemic, switched to the distance learning organization. Despite the fact that distance education has started to develop as a form of education since the 90s, the educational institutions of our republic have faced many problems, both technical and the choice of teaching methods. The article attempts to present the general overview of distance education, problems and things to do in the conditions of the epidemic.

Keywords: distance learning, educational technologies, virtual learning environment.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բեգիրջյան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս. Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու: «Աստղիկ» հրատարակչություն: Երևան: 2017: 152 էջ:
2. Лукша П. Образование для сложного общества «Образовательные экосистемы для общественной трансформации». Доклад «Global Education Futures». 2018. 212 с.
3. Вайндорф-Сысоева М. и др. Методика дистанционного обучения. Учебное пособие для вузов. Москва, Юрайт. 2019. 194 с.
4. Титаренко Л. и др. Модернизация систем высшего образования Беларуси и Армении в контексте процессов евразийской и европейской интеграции: проблемы и перспективы. Минск. БГУ. 2018. 175 с.

5. Harutyunyan A., Manukyan N. First Initiative of Higher Education Digitization in Armenia: Issues and Challenges// Proceedings of the CSIT Conference. 23-27 September. Yerevan. 2019. P. 259-262.
6. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56573> (15.01.2021)
7. <http://armunicat.nla.am/> (10.02.2021)
8. https://mel.fm/ucheba/shkola/936517-distance_education_tired (15.12.2020)
9. <https://www.asnet.am> (01.02.2021)
10. <https://www.am.undp.org/content/armenia/en/home/library/socio-economic-impact-assessment-of-the-covid-19-outbreak-in-arm.html>, 2020 SEIA REPORT, (15.01.2021)

Տեղեկություններ հեղինակի մասին

Մանուկյան Ն. Հ. - դասախոս

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

Էլ. փոստ nana.manukyan@isec.am

Տրվել է խմբագրություն՝ 13.10.2021

Գրախոսվել է՝ 24.01.2022